ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԱԼՈՒՍՏՅԱՆ ՌԵԳԻՆԱ ԱԼԵՔՍԱՆԻ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄՏՔԻ ԴԵՐԸ «ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ» ԿՈՄԻՏԵԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2024

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ, պրոֆեսոր

Ռայմոնդ Ալբերտի Գևորգյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր

Արսեն Գագիկի Ավագյան

պ.գ.թ, դոցենտ

Նելլի Արտաշեսի Մինասյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2024 թ. նոյեմբերի 15-ին, ժամը 14:00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի Համաշխարհային պատմության 006 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թ. հոկտեմբերի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ պ.գ.թ., դոցենտ Ա. Փաշայան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Օսմանյան կայսրությունը թեոկրատական միապետություն էր: Իր գոյության գրեթե ողջ ընթացքում երկրի ներսում պետությունն էթնիկ և կրոնական բազմաթիվ փոքրամասնությունների հետ փոխհարաբերությունները կարգավորել է կրոնական սկզբունքով պայմանավորված: 19-րդ դարի կեսերից կայսրություն են սկսել թափանցել ազգայնականությունը, ռասայականությունը և եվրոպական սոցիալ-փիլիսոփայական ու քաղաքական մտքի առանձին գաղափարներ՝ բախվելով երկրի ավանդական ընկալումների և կենսակերպի հետ: Առաջին խմբավորումը, որը կրել է նշված գաղափարների ազդեցությունը, 1860-ականներին գործող նոր օսմաններն էին: Սակայն առաջին քաղաքական ուժը, որը եվրոպական գաղափարներն ընդգրկել է իր գաղափարախոսությունում, «Միություն և առաջադիմություն» կոմիտեն (թուրք.՝ İttihat ve Terakki, 1889-1918 թթ.) էր: Այդ գաղափարների ազդեցությամբ կոմիտեն ստանձնել է թուրք ազգի և թուրքական ազգային պետության ստեղծման, ինչպես նաև դրա արդիականացման քաղաքականությունը: Կոմիտեն այդ քաղաքականության իրականացման ընթացքում եվրոպական ծայրահեղական գաղափարների (ռասիզմ, սոցիալ-դարվինիզմ, հասարակության և պետության օրգանական անալոգիա) ազդեցությամբ տեղաբնիկ որոշ քրիստոնյա և մուսուլման փոքրամասնություններ սկսել է ընկալել որպես պետության անվտանգության և առաջընթացի խոչընդոտ, ինչը նպաստել է նրանց ոչնչացման որոշմանը: Հայոց ցեղասպանությունը կարելի է դիտարկել այդ դիքորոշման գագաթնակետը, որն իրագործելու մեթոդներից յուրաքանչյուրը, մասնավորապես՝ հայ տղամարդկանց և մտավորականության ոչնչացումը, հայերի ունեզրկումը, կանանց և երեխաների որոշ մասի ծրագրված թուրքացումը, հայրենազրկումը, գործիք են դարձել թուրքական ազգային պետության կառուցման համար[1]:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսության ձևավորման գործընթացում եվրոպական մտքի դերի ուսումնասիրության անհրաժեշտությամբ, առանց որի անհնար է պատկերացում կազմել կոմիտեի գաղափարախոսական կերպափոխումների, թուրքական ազգի և թուրքական ազգային պետության ընկալումների վերաբերյալ: Հետազոտությունը նաև հնարավոր է դարձնում համակողմանի պատկերացում կազմել բնաջնջումը որպես գործիք ծառայեցնելու թուրքական վերնախավի գաղափարական հենքի, շարժառիթների մասին՝ խորացնելով հանցագործության կանխամտածվածության գաղափարը: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նաև Հայոց ցեղասպանության շարունակակական ժխտման պայմաններում այդ հանցագործության ճանաչողությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ:

---

[1] «Հայրենազրկում» տերմինի մասին տե՛ս Մելքոնյան Ա., ««Հայրենազրկում» եզրույթի իրավական ձևակերպման անհրաժեշտությունը», Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատասխանատվության միջազգային իրավական հիմնախնդիրները, գիտաժողովի նյութեր, խմբ. Նահապետյան Ռ., Ավետիսյան Լ., 22-23 ապրիլի 2015, Երևան, «Արտագերս», էջ 33-43:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է համակողմանիորեն ուսումնասիրել եվրոպական մտքի դերը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսության ձևավորման վրա և բացահայտել դրա ազդեցությունը Հայոց ցեղասպանության որոշման կայացման, դրա իրականացման վրա: Սույն նպատակի իրականացման համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝

- ներկայացնել 19-րդ դարի եվրոպական փիլիսոփայական և քաղաքական մտքի ուրվագիծը և քննել «Միություն և առաջադիմություն» կոմիտեի վրա ազդելու հնարավոր ուղիները,
- քննության ենթարկել կոմիտեի ակնառու գործիչների, ղեկավարների և գաղափարախոսների կապն այն եվրոպական մտավորականների, քաղաքագետների, տեսաբանների հետ, որոնց միջոցով տեղի է ունեցել նոր ժամանակներին բնորոշ գաղափարների (ազգայնականություն, ազգային պետություն, ազգային տնտեսություն, հասարակության և պետության օրգանական պատկերացումներ) փոխառումը,
- հետազոտել կոմիտեի՝ այդ փոխառությունների մեկնությունը, ադապտացումն Օսմանյան կայսրության իրականությանը և ազգային պետություն հիմնելու իրենց տեսլականին ծառայեցնելը,
- ուսումնասիրել կոմիտեի առանցքային գործիչների, գաղափարախոսների աշխարհայացքի ձևավորումը և գաղափարների կերպափոխումները՝ 19-րդ դարի եվրոպական մտքի ազդեցության ներքո, և դրանց բախումը իսլամի հետ,
- նոր լույսի ներքո քննարկել դրանց ազդեցությունը կոմիտեի հակահայկական դիրքորոշման ձևավորման վրա,
- բացահայտել այդ գաղափարների դերը և նշանակությունը Հայոց ցեղասպանության իրականացման մեջ,
- հետազոտել այդ գաղափարների գործնական կիրառությունը և դրսևորումները ցեղասպանության իրագործման որոշ մեթոդներում,
- ի ցույց դնել Հայոց ցեղասպանության նախատիպային բնույթը՝ որպես արդի գաղափարներով իրականացված առաջին ցեղասպանություն:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակը: Ժամանակագրական առումով թեման ընդգրկում է 1889-1918 թթ.՝ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի հիմնումից մինչև իշխանության իրավական դադարեցումը:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը: Ատենախոսության առաջին գլուխն ուսումնասիրվել է պատմական մեթոդով. այն մեկ կոմիտեի՝ կազմավորումից մինչև *de jure* դադարեցում, գաղափարախոսության զարգացման ուսումնասիրությունը պատմական տվյալ ժամանակաշրջանում ներկայացնելու ամենաարդյունավետ մեթոդն էր: Համեմատական մեթոդը կիրառել ենք կոմիտեի գործունեության տարբեր շրջափուլեր զուգորդելու, ինչպես նաև կոմիտեի որոշ գաղափարների առանձնահատկությունները ձևավորումից մինչև վերջնական դրսևորում ցույց տալու համար: Թուրք ոճրագործ վերնախավում սոցիալ-դարվինիստական աշխարհայացքի առկայությունը և Հայոց ցեղասպանության հետ դրա կապն ուսումնասիրել ենք ռետրոսպեկտիվ՝ հետահայաց (ռեգրեսիվ, ռեկոնստրուկցիոն) մեթոդով: «Միություն և առաջադիմություն» կոմիտեի՝ հայրենիքի որոնման և «կենսական տարածքի» պատկերացումների, թուրք ազգային միատարր պետություն ստեղծելու և հայ ժողովրդին

այդ տարածքում ոչնչացնելու առնչությունների ուսումնասիրման համար առաջնորդվել ենք համակարգային մեթոդով:

Ատենախոսության գիտական նորույթը: «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսության և դրա առանցքային գործիչների, գաղափա–րախոսների աշխարհայացքի վրա 19-րդ դարի եվրոպական քաղաքական ու փիլիսոփայական մտքի, արդիականացման գաղափարների ազդեցության և Հայոց ցեղասպանության որոշման կայացման, իրականացման հարցերում նշված գործոնների կիրառության ամբողջական ուսումնասիրություն դեռևս գոյություն չունի: Մինչ օրս հայ, թուրք և օտարերկրացի հետազոտողների ուշադրության կենտրոնում են գտնվել «Միություն և առաջադիմություն» կոմիտեի կառուցվածքը, գաղափարախոսությունը, Հայոց ցեղասպանության ինչպես ընդհանուր պատմությունը, այնպես էլ դրա առանձին դրվագները: Արդի ցեղասպանագիտական ուսումնասիրությունների վրա հենված տեսական որոշ վերլուծություններ, ինչպես, օրինակ՝ իշխող կուսակցության աշխարհայացքում սոցիալ-դարվինիզմի և ռասիզմի առկայությունն ու դրսևորումը Հայոց ցեղասպանության ընթացքում, գիտական շրջանառության մեջ են դրվում սույն ատենախոսությամբ:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Հետազոտությունն ունի ինչպես գիտական, այնպես էլ կիրառական նշանակություն: Այն կարող է օգտակար լինել պատմաբանների, քաղաքագետների, մարդաբանների, սոցիոլոգների, ցեղասպանագետների համար: Խորացնելով կոմիտեի եվրոպական գաղափարները փոխառելու և քաղաքականության մեջ դրանք կիրառելու փաստարկը՝ այն կարող է հիմք ծառայել թուրքագիտական նոր ուսումնասիրությունների համար: Ցեղասպանությունների իրականացման գործում վերնախավի գաղափարախոսությունը կարևորող այս հետազոտությունը, օգնելով վեր հանել օտարման, ռասայականացման և թիրախավորման վաղ ահազանգող նշանները, կարող է կարևոր ներդրում ունենալ նաև ցեղասպանությունների կանխարգելման գործում: Խորացնելով Հայոց ցեղասպանության կանխամտածվածության փաստարկը՝ աշխատանքը կարող է նպաստել ժխտողականության դեմ տարբեր դաշտերում պայքարելու գործին: Ատենախոսությունը կամ դրա առանձին բաժիններ կարող են օգտագործվել նաև ՀՀ բուհական դասագրքերում կոմիտեին և Հայոց ցեղասպանությանը վերաբերող բաժինների շարադրման համար:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդում: Այն քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի նիստում: Ատենախոսությունը քննարկվել է նաև «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Վահագն Դադրյանի անվան համեմատական ցեղասպանագիտության, Հայոց ցեղասպանության զոհերի ու վերապրողների փաստագրման և ուսումնասիրության, Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական ուսումնասիրությունների բաժինների համատեղ նիստում: Ատենախոսության հիմնական դրույթները և եզրահանգումները հրապարակվել են գիտական հոդվածների տեսքով: Թեմայի վերաբերյալ գիտաժողովներում ներկայացվել են զեկուցումներ:

Հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը: Ուսումնասիրության համար աղբյուրագիտական հիմք են ծառայել ինչպես տպագիր, այնպես էլ անտիպ սկզբնաղբյուրները, մամուլը, ականատեսների, ցեղասպանությունը վերապրածների հուշագրությունները և համապատասխան մասնագիտական գրականությունը:

Եվրոպական սոցիալ-փիլիսոփայական գաղափարներից ազդված Օսմանյան կայսրության առաջին քաղաքական-մտավորական խմբակի՝ նոր օսմանների գործունեության, առանձին անդամների մասին տվյալները հենված են Շերիֆ Մարդինի[2], Անատոլի Ժելտյակովի[3], Ռուբեն Սաֆրաստյանի[4], Իրմա Ֆադեևայի[5], Վլադիմիր Գորդլևսկու[6] աշխատությունների վրա:

Հետազոտության օբյեկտ՝ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի կառուցվածքի և գործունեության վերաբերյալ գրականությունը հսկայածավալ է և բազմալեզու: Սույն ատենախոսության համար նյութ են ապահովել Էռնեստ Ռամսորի[7], Էրիկ Ցյուրխերի[8], Ահմեդ Կուրանի[9], Նիյազի Բերքեսի[10] աշխատությունները: Երիտթուրքերի գործունեության, օսմանյան հայ համայնքի հետ նրանց հարաբերությունների վերաբերյալ հայ

---

[2] Mardin Ş., The Genesis of Young Ottoman Thought: a Study in the Modernization of Turkish Political Press, Syracuse University Press, 2000, 472 pp.

[3] Желтяков А. Д., Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729-1908 гг.), Москва, "Наука", 1972, 318 стр.

[4] Сафрастян Р. А., Доктрина османизма в политической жизни Османской империи (50-70 гг. XIX в.), Ереван, издательство АН АрмССР, 1985, 147 стр.

[5] Фадеева И. Л., Официальные доктрины в идеологии и политике Османской империи (османизм-панисламизм), XIX-начало XX в., Москва, "Наука", 1985, 272 стр.

[6] Гордлевскій Вл., Очерки по новой османской литературѣ, Москва, "Крестный календарь", 1912, 146 стр.

[7] Ramsaur E. E., The Young Turks: Prelude to Revolution 1908, New York, "Russell & Russell", 1970, 180 pp.

[8] Zürcher E. J., The Young Turk Legacy and Nation Building: from the Ottoman Empire to Atatürk's Turkey, London, New York, "I.B. Tauris", 2010, 368 pp.; Zürcher E. J., The Unionist Factor. The Role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement 1905-1926, Leiden, "E. J. Brill", 1984, 198 pp.

[9] Kuran A. B., İnkılap Tarihimiz ve Jön Türkler, 2 baskı, Istanbul, "Kaynak Yayınları", 2000, 464 s.

[10] Berkes N., The Development of Secularism in Turkey, London, "Hurst&Company", 1998, 530 pp.

մասնագետներից օգտվել ենք Յուրի Պետրոսյանի[11], Ջոն Կիրակոսյանի[12], Հրաչիկ Սիմոնյանի[13], Վալերի Թունյանի[14] աշխատություններից:

Ատենախոսության համար կարևոր նշանակություն են ունեցել հենց երիտթուրքերի ու նրանց գաղափարախոսների հուշագրությունները, քաղաքական, գրական ստեղծագործությունները՝ փիլիսոփայական տարբեր տեսություններին հարելու իրենց իսկ վկայությունները վեր հանելու համար[15]: Ուսումնասիրվել են նաև այն առաջին թյուրքագետների [16], պոզիտիվիստների [17], ռասիզմի [18] և ժառանգականության

---

[11] Петросян Ю. А., Младотурецкое движение (вторая половина XIX - начало XX в.), Москва, "Наука", 1971, 328 стр.

[12] Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1915-1916 թթ.), Երևան, «Հայաստան», 1967, 557 էջ, նույնի՝ Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.), Երևան, «Հայաստան», 1982, 360 էջ, նաև՝ Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915-ից մինչև մեր օրերը), Երևան, «Հայաստան», 1983, 464 էջ:

[13] Սիմոնյան Հր., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, «Հայաստան», 1986, 564 էջ:

[14] Тунян В. Г., Младотурки и Армянский вопрос, часть первая, 1908-1912 гг., Ереван, МИГА, 2004, 391 стр.; Тунян В. Г., Младотурки и Армянский вопрос, часть вторая, август 1912 – октябрь 1914 гг., Ереван, МИГА, 2005, 551 стр.

[15] Edib H., Memoirs of Halide Edib, New York, London, "The Century Co.", 1926, 472 pp.; Edib H., The Turkish Ordeal: Being the further Memoirs of Halide Edib, New York, London, "The Century Co.", 1928, 407 pp.; Djemal Pasha, Memories of a Turkish Statesman – 1913-1919, New York, "George H. Doran Company", 1922, 302 pp.; Tekin Alp, The Turkish and Pan-Turkish Ideal, Constantinople, Admiralty War Staff Intelligence Division, 1917, 58 pp.; Karabekir K., Ittihat ve Terakki Cemiyeti, Istanbul, "Yapı Kredi Yayınları", 2009, 347 s.; Akçura Y., Fehmi I., "Yusuf Akçura's üç tarz-ı siyaset ("Three Kinds of Policy")", Oriente Moderno, 1981, Vol. 61, No. 1/12, 1-20 pp.; Mourad-Bey, La force et la faiblesse de la Turquie: Les coupables et les innocents, Geneva, "Rey&Malavallon", 1897, 60 pp.; Ziya Gökalp, Turkish Nationalism and Western Civilization, ed. by Niyazi Berkes, New York, Columbia University Press, 1959, 336 pp.

[16] Vámbéry A., Travels in Central Asia (performed in 1863), London, "John Murray", 1864, 443 pp.; Vámbéry A., His Life and Adventures, London, "T. Fisher Unwin", 1889, 350 pp.; Vambéry A., The Story of My Struggles: The Memoirs of Arminius Vambéry, Vol. I, London, "T. Fisher Unwin", 1905, 236 pp.; Vol. II, London, "T. Fisher Unwin", 1905, 492 pp.; Vambéry A., Das Türkenvolk in seinen ethnologischen und ethnographischen Ileziehungen, Leipzig, "Brockhaus", 1885, 638 s.; Cahun L., Introduction à l'histoire de l'Asie. Turcs et Mongols des origins à 1405, Paris, "Armand Colin et C Éditeurs", 1896, 519 pp.

[17] Comte A., The Positive Philosophy of Auguste Comte, tr. by Harriet Martineau, in two volumes, Vol. II, second edition, London, "Trübner & Co., Ludgate Hill", 1875, 338 pp.; Огюсть Контъ и позитивизмъ, статьи Д. С. Милля, Г. Спенсера, Л. Уорда, переводъ Н. Н. Спиридонова, Москва, "Книжное дело", 1897, 331 стр.; Durkheim E., The Division of Labor in Society, "The Macmillan Press", 1984, 352 pp.

[18] Лебон Г., Психология народов и масс, Москва, "АСТ", 2018, 383 стр.; Гобино Ж. А., Опыт о Неравенстве Человеческих Рас, Москва, "Одиссей", "ОЛМА-ПРЕСС", 2001, 768 стр.

տեսաբանների[19] աշխատությունները, որոնք ազդեցություն են գործել իթթիհաթական գաղափարախոսների և քաղաքական ակնառու գործիչների վրա, վերջիններիս աշխարհայացքի առանձնահատկություններն առավել համապարփակ ներկայացնելու համար:

«Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսության, եվրոպական սոցիալ-փիլիսոփայական, քաղաքական մտքով կոմիտեի հետաքրքրվածության հետազոտման համար կարևոր, գրեթե սկզբնաղբյուրային են թուրք պատմաբան, Փրինսթոնի համալսարանի դասախոս Մեհմեդ Շյուքրյու Հանիօղլուի երկու՝ «Երիտթուրքերն ընդդիմությունում» և «Նախապատրաստելով հեղափոխություն. երիտթուրքեր» աշխատությունները[20]: Հանիօղլուի ուսումնասիրության ժամանակագրական շրջանը 1889-1908 թթ. է՝ կոմիտեի ստեղծումից մինչև հեղափոխություն: Կոմիտեն իր գործունեության ողջ ընթացքում, նույնիսկ 1909 թ. կուսակցության կարգավիճակ ստանալուց հետո էլ, մնացել է կիսագաղտնի, ընդհատակյա կազմակերպություն: Այն ունեցել է սահմանափակ թղթաբանություն, որի հսկայական մասը (նաև կոնգրեսների սղագրությունները) ոչնչացվել է դոկտոր Մեհմեդ Նազըմի կողմից, ինչը հայտնի է դարձել հետպատերազմյան ռազմական ատյանների հարցաքննությունների ժամանակ[21]: Հանիօղլուի գրքերի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ թեմայի լուսաբանման նպատակով նա ուսումնասիրել է ոչ միայն երիտթուրքական մամուլը, առանձին անդամների տպագիր և ձեռագիր հուշագրությունները, կոմիտեին կից գործող անհատների և ժամանակակիցների վկայությունները, անձնական նամակագրությունը, այլև նրանցից ոմանց ընտանեկան արխիվները: Կոմիտեի հիերարխիայի վերին հարթակը ներկայացնող անհատների գաղափարական հակվածությունները հասկանալու և ներկայացնելու տեսանկյունից արժեքավոր է նաև շվեյցարացի պատմաբան Հանս-Լուկաս Կիզերի Մեհմեդ Թալեաթին և դոկտոր Մեհմեդ Ռեշիդին[22] նվիրված աշխատանքները, որոնք ոչ միայն ներկայացնում են իթթիհաթական այս բարձրաստիճան պաշտոնյաների գործունեության պատմությունը, աշխարհայացքը, այլև նրանց վերաբերմունքը Հայոց ցեղասպանության նկատմամբ, հանցագործության նրանց «հիմնավորումները»: Ժամանակակից թուրքական ազգայնականության հայր համարվող կուսակցական գաղափարախոս

---

[19] Ribot Th., Heredity: A Psychological Study of its Phenomena, Laws, Causes, and Consequences, New York, “D. Appleton and Company”, 1875, 393 pp.; Guyau J. M., Education and Heredity. A Study in Sociology, London, “Walter Scott”, 1891, 306 pp.

[20] Hanioğlu M. Ş., The Young Turks in Opposition, New York, Oxford, Oxford University Press, 1995, 408 pp.; Hanioğlu Ş. M., Preparation for a Revolution, The Young Turks, 1902-1908, Oxford, Oxford University Press, 2001, 560 pp.

[21] Անումյան Մ., Ճանաչում և դատապարտում. Երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.), Երևան, ՀՑԹԻ, 2013, էջ 23:

[22] Kieser H.-L., Talaat Pasha: Father of Modern Turkey, Architect of Genocide, Princeton & Oxford, Princeton University Press, 2018, 552 pp.; Kieser H.-L., “Dr. Mehmed Reshid (1873– 1919): A Political Doctor” in Der Völkermord an den Armeniern und die Shoah, eds. Kieser H, Schaller D., Zurich, “Chronos”, 2002, pp. 245-280.

Մեհմեդ Զիյա Գյոքալփի հայացքների մասին տեղեկատվություն ստացել ենք Ուրիել Հեյդի[23] և Ալեքսանդր Սաֆարյանի[24] աշխատություններից:

Իթթիհաթականների աշխարհայացքի հակահայկական տարրերի վերաբերյալ կարևոր վկայություններ են տալիս ժամանակակիցները, ինչպես, օրինակ՝ Փարիզում նրանց հանդիպած հնչակյան գործիչ Ստեփան Սապահ-Գուլյանը[25], ՀՅԴ գործիչ Վահան Փափազյանը[26], իսլամի հանդեպ ոչ միանշանակ վերաբերմունքի վերաբերյալ՝ Կ.Պոլսում նրանց հետ հարցազրույցներ վարած ռուս լրագրող Արիադնա Տիրկովան[27]:

«Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսության ռասայական, ինչպես նաև պանթուրքական հայեցակետերի քննության համար սույն ատենախոսության համար մեծ նշանակություն են ունեցել Չարլզ Հոսթլերի[28] և Ջեյքոբ Լանդաուի[29] աշխատությունները: Երկուսն էլ հիմնաքարային դրույթներում հղում են Զավեն Նալբանդյանի և Վարդենի Քալանթար-Նալբանդյանի «Միացեալ, անկախ Թուրանիա կամ ի՞նչ կը ծրագրեն թուրքերը»[30] աշխատությունը, ինչը սկզբնաղբյուրային նշանակություն է ունեցել նաև սույն ատենախոսության համար: Թուրք-մուսուլմանական խոսույթում ընդդեմ օսմանյան հայ համայնքի ձևավորված ռասայական նախապաշարմունքները ներկայացրել ենք պատմաբան Ստեփան Աստուրյանի աշխատանքի միջոցով[31]:

«Միություն և առաջադիմություն» կոմիտեի կազմավորման, ներքին կառուցակարգի, իթթիհաթական բջիջների, ակումբների, առանձին գործիչների, Հայոց ցեղասպանության որոշման կայացման, ցանցային իրականացման և ներքին օղակներով հրամանների փոխանցման ընդհանուր պատկերը լիովին հասկանալու համար օգտվել ենք Արսեն Ավագյանի «Հայոց ցեղասպանություն. որոշումների

---

[23] Heyd U., Foundations of Turkish Nationalism: The Life and Teachings of Ziya Gökalp, London, “Luzac and Company Ltd.” and “The Harvill Press Ltd”, 1950, 174 pp.

[24] Safarian Al., “Ziya Gökalp on National Education”, Iran & the Caucasus, 2004, Vol. 8, No. 2, pp. 219-229; Սաֆարյան Ալ., Զիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», Երևան, ԵՊՀ հրատ., 2012, 298 էջ:

[25] Սապահ-Գիլեան Ս., Երիտասարդ Թիւրքիա, Պարիզ, Հրատարակութիւն հնչակեան կուսակցութեան, 1908, 76 էջ, նույնի՝ Պատասխանատուները, Փրաւիտէնս, «Երիտասարդ Հայաստան», 1916, 352 էջ:

[26] Փափազեան Վ., Իմ յուշերը, հատոր երկրորդ, Պէյրութ, տպարան Համազգային Ընկերութեան, 1952, 602 էջ:

[27] Тыркова А., Старая Турція и младотурки. Годъ въ Константинополе, Петроградъ, тип. Б.М. Вольфа, 1916, 180 стр.

[28] Hostler C. W., Turkism and the Soviets: The Turks of the World and Their Political Objectives, London, “George Allen&Unwin”, 1957, 244 pp.

[29] Landau J. M., Pan-Turkism: from Irredentism to Cooperation, Bloomington and Indianapolis, Indiana University Press, 1995, 275 pp.

[30] Զարեւանդ, Միացեալ, անկախ Թուրանիա կամ ի՞նչ կը ծրագրեն թուրքերը (Ա. տ., ա. հ., 1926), 228 էջ:

[31] Stephan H. Astourian, “Modern Turkish Identity and the Armenian Genocide: from Prejudice to Racist Nationalism” in Remembrance and Denial: The Case of the Armenian Genocide, ed. Richard G. Hovannisian, Detroit, Wayne State University, 1999, pp. 23-49.

կայացման և իրականացման մեխանիզմներ»[32] գրքից, որն առանձնահատուկ դեր է ունեցել մեր հետազոտության մեջ: Ցեղասպանության ընթացքի, տարբեր նահանգներում և շրջաններում դրա իրականացման առանձնահատկությունների և ոչնչացման համակարգային պատկերացումը կազմել ենք Ռայմոնդ Գևորգյանի աշխատության շնորհիվ[33]: Այն նաև արժեքավոր էր հայ քաղաքական կուսակ-ցությունների՝ երիտթուրքերի հետ առնչությունների բացահայտման տեսանկյունից: Հայոց ցեղասպանության առանձին բաղադրիչներն ուսումնասիրելու նպատակով օգտվել ենք Վահագն Դադրյանի աշխատություններից: Նա առաջինն էր հայ ցեղասպանագիտության մեջ, ով առավել շերտավորված և մանրամասնորեն է անդրադարձել հանցագործության իրականացման առանձին մեթոդներին[34]: Օսմանյան կայսրությունում գոյություն ունեցած ցեղասպանական ծրագրերն ուսումնասիրել է թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանը[35]: Իր աշխատության մեջ հեղինակը քննել է թուրքական կառավարության 1876 թ., 1915 թ. և 1920 թ. ցեղասպանական ծրագրերը՝ վեր հանելով դրանց առանձնահատկությունները: Հայոց ցեղասպանության և թուրքական ազգայնականության հատման կետերի ուսումնասիրման և սույն ատենախոսության մեջ ներկայացնելու համար օգտվել ենք Թաներ Աքչամի[36], Ուղուր Ումիթ Ունգյորի[37] աշխատանքներից, հանցագործության ընթացակարգի և համա-կենտրոնացման ճամբարների վերաբերյալ՝ Հիլմար Կայզերի[38], Ֆուաթ Դունդարի[39], Ցեղերի և փախստականների բնակեցման գլխավոր վարչության գործունեության

---

[32] Авакян А., Геноцид армян: механизмы принятия и исполнения решений, Ереван, МИГА, 2013, 133 стр.

[33] Kévorkian R., The Armenian Genocide: a Complete History, London, New York, “I.B. Tauris”, 2011, 1029 pp.

[34] Dadrian V. N., The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, Providence, Oxford, “Berghahn Books”, 1995, xxxviii+452 pp.; Dadrian V. N., “The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians”, Holocaust and Genocide Studies, 1986, Vol. 1, No. 2, pp. 169-192; Dadrian V. N., “Children as Victims of Genocide: The Armenian Case”, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2003, No. 7, pp. 3-19.

[35] Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, «Լուսակն», 2009, 247 էջ:

[36] Akçam T., A Shameful Act, the Armenian Genocide and the Question of Turkish Responsibility, New York, Metropolitan Books, “Henry Holt and Company”, 2006, 483 pp.; Akçam T., Killing Orders. Talat Pasha’s Telegrams and the Armenian Genocide, “Palgrave Macmillan”, 2018, 279 pp.; Akçam T., The Young Turks’ Crime against Humanity: the Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire, Princeton, Princeton University Press, 2012, 528 pp.

[37] Üngör U. Ü., Polatel M., Confiscation and Destruction. The Young Turk Seizure of Armenian Property, London, New York, “Continuum”, 2011, 226 pp.; Ungör U. Ü., The Making of Modern Turkey: Nation and State in Eastern Anatolia, 1913-1950, Oxford: Oxford University Press, 2011, 334 pp.

[38] Kaiser H., At the Crossroads of Der Zor: Death, Survival, and Humanitarian Resistance in Aleppo, 1915-1917, Princeton, NJ, Gomidas Institute, 2001, 119 pp.

[39] Fuat D., “The Settlement Policy of the Committee of Union and Progress, 1913-1918”, in Turkey Beyond Nationalism: Towards Post-Nationalist Identities, ed. Hans-Lukas Kieser, London, New York, “I.B. Tauris”, 2013, pp. 37-43.

վերաբերյալ՝ Այհան Աքթարի[40], ցեղասպանական բռնի տեղափոխումը և ձուլումը լուսաբանելու համար՝ Ռուբեն Մելքոնյանի[41] ուսումնասիրություններից:

Ատենախոսության թեման ամբողջական դարձնելու, համակողմանիորեն և համատեքստային ներկայացնելու, թուրք ազգայնականության օրինաչափությունները բացահայտելու համար օգտվել ենք ազգայնականության դասական հեղինակներ Էնթոնի Սմիթի[42], Բենեդիկտ Անդերսոնի[43], Էռնեստ Գելների[44], Էլի Կեդուրիի[45] աշխատություններից:

Թեմայի հետազոտությանն օժանդակել են փաստաթղթերի ժողովածուները[46], Օսմանյան կայսրությունում դիվանագիտական ծառայության մեջ գտնվող օտարերկրացիների զեկուցագրերի հավաքածուները[47]: Օգտվել ենք ժամանակի մամուլի հրապարակումներից[48]: Պարբերականների մեջ կարող ենք առանձնացնել մեզ համար սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող բողոքական Ամերիկյան աստվածաշնչյան ընկերության՝ Կ.Պոլսում հրատարակած անգլալեզու «The Orient» շաբաթաթերթը[49]:

---

[40] Aktar A., "Conversion of a 'Country' into a 'Fatherland': The Case of Turkification examined, 1923-1934", in Nationalism in Troubled Triangle. New Perspective on South-East Europe, eds. Aktar A., Kızılyürek N., Özkırımlı U., London, "Palgrave Macmillan", 2010, pp. 21-35.

[41] Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, հեղ. հրատ., 2010, 184 էջ, Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ., Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, Երևան, «ՎՄՎ-Պրինտ», 2015, 240 էջ:

[42] Smith A. D., National Identity, London, Penguin Books, 1991, 227 pp.; Smith A. D., Ethno-Symbolism and Nationalism: A Cultural Approach, London, New York, "Routledge", 2009, 184 pp.

[43] Anderson B., Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism, London and New York, "Verso", 1991, 240 pp.

[44] Gellner E., Nations and Nationalism, Ithaca, Cornell University Press, 1983, 150 pp.

[45] Kedourie E., Nationalism, London, Hutchinson University Library, 1961, 151 pp.

[46] Министерство иностранныхъ делъ, сборникъ дипломатическихъ документовъ. Реформы въ Арменіи, 26 ноября 1912 года – 10 мая 1914 года, Петроградъ, Государственная типографія, 1915, 294 стр.; Bryce J., The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915–16, London, "Joseph Causton and Sons", 1916, 684 pp.; Trials of War Criminals before the Nuernberg Military Tribunals under Control Council Law No. 10, October 1946-April 1949, Vol. V, Washington, United States Government Printing Office, 1950, 1273 pp.; Сборник договоров России с другими государствами, 1856-1917, сост. Адамов Е. А., Козьменко И. В., Москва, Государственное издательство политической литературы, 1952, 464 стр.; Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, առաջաբանը, թարգմ. և ծնթ. Ա. Հ. Փափազյանի, Երևան, ՍՍՀ ԳԱ հրատ., 1989, 256 էջ:

[47] The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916, ed. by Gust Wolfgang, New York, Oxford, "Berghahn", 2014, 786 pp.; United States Official Records on the Armenian Genocide 1915-1917, ed. by Ara Sarafian, London, "Taderon Press", 2004, 704 pp.

[48] «Դրօշակ» (Ժնև, 1900, 1902), «Իրաւունք» (Վառնա, 1902), «Լուսաբեր» (Գահիրէ, 1904, 1905), «Հայրենիք» ամսագիր (Բոստոն, 1922), «Արիամարտ» (Կ.Պոլիս, 1918, 1919), «Ճակատամարտ» (Կ. Պոլիս, 1919, 1923):

[49] Բաց հղումը՝ http://www.dlir.org/archive/orc-exhibit/items/browse/collection/9?search=The+Orient&submit_search=Search, դիտվել է՝ 15.03.2023:

Թերթը հիմնականում թարգմանում և արտատպում էր հոդվածներ Օսմանյան կայսրության հայկական, հունական, հրեական համայնքների և իհարկե, երիտթուրքական պաշտոնաթերթերից:

Թեմայի լուսաբանումն ամբողջական են դարձրել հանրագիտարանները, վերապրածների և ականատեսների հուշագրությունները, ցեղասպանագիտական տեսական գրականությունը:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից՝ երեքական ենթագլխով, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 188 էջ:

Ներածությունում հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում է հետազոտության առարկան, նպատակն ու խնդիրները, ժամանակագրական և տարածքային շրջանակը, մեթոդաբանությունը, գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը, վերլուծվում է հետազոտական թեմայի աղբյուրագիտական հիմքը, գիտական ուսումնասիրվածության աստիճանը:

Ատենախոսության առաջին՝ **««Միություն և առաջադիմություն» կոմիտեի կառուցվածքը և գաղափարները»** գլխում նախ տրվում է 19-րդ դարի եվրոպական սոցիալ-փիլիսոփայական մտքի ուրվագիծը: Ընտրողաբար ներկայացվում են արդի ժամանակներին հատուկ քաղաքական և սոցիալ-փիլիսոփայական այն գաղափարները, հոսանքները, որոնք ներթափանցել էին Օսմանյան կայսրություն՝ հետագայում դրանց ազդեցությունը քաղաքական և մտավորական վերնախավի վրա ցույց տալու նպատակով: Առանձին ենթագլուխներով ներկայացվում են կոմիտեի գործունեությունը և գաղափարների աստիճանական զարգացումը 1889-1902 և 1902-1913 թթ.: 1889-1902 թթ. «Միություն և առաջադիմություն» կոմիտեն կազմավորվել է որպես քաղաքական ընդդիմադիր ուժ: 1902 թ. Օսմանյան լիբերալների առաջին կոնգրեսում տեղի է ունեցել կոմիտեի լիբերալ և պահպանողական թևերի տարանջատումը: Գլխում ցույց է տրվում, որ 1889-1902 թթ. նոր ձևավորվող երիտթուրքական մատերիալիստական աշխարհայացքը կրում էր բիո-օրգանական և պոզիտիվիստական գաղափարներ, դրա հետ մեկտեղ՝ երիտթուրքերի ազգայնականությունը կրոնական էր, իսկ հակասուլթանական պայքարում համախոհներ ձեռք բերելու նպատակով քրիստոնյաների հետ համագործակցությունը կատարվում էր օսմանիզմի հռետորաբանության ներքո: Ցույց են տրվում հայ քաղաքական կուսակցությունների հետ առնչությունները և կոմիտեի առանձին անհատների մեջ զարգացող հակահայկական տրամադրությունները:

Երրորդ ենթագլխում ներկայացվում է կոմիտեի ազգայնականության զարգացումը 1902-1908 թթ., ինչը դրսևորվում է թուրքական լեզվի, թյուրքական անցյալի, հայրենիքի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրության աճով: Այս փուլում կոմիտեի գերնպատակը հեղաշրջումն էր, հետևաբար ոչ թուրքերի աջակցության համար նրանց հռետորաբանության մեջ փոխնիփոխ գործածվում էին թուրքիզմը, օսմանիզմը, իսլամիզմը: Այս շրջանում երիտթուրքերի մոտ ձևավորված գաղափարական տարրերը 1908 թ. հեղաշրջումից հետո վերածվել են «Թուրքիան թուրքերի համար» կարգախոսով պետական քաղաքականության: Ատենախոսության մեջ շեշտադրվում է 1913 թ.

իթթիհաթական երկրորդ հեղաշրջումը, երբ պետության և կուսակցության լիակատար սերտաճումը, պրոտոֆաշիստական միակուսակցական վարչակարգի հաստատումը թույլ տվեց կոմիտեին գործադրել միատարր թուրքական ազգային պետություն հիմնելու իր նպատակը, ինչը ճակատագրական դարձավ կայսրության փոքրամասնությունների համար:

Ատենախոսության երկրորդ՝ «**«Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարական առանձին տարրերը և Հայոց ցեղասպանությունը**» գլխի առաջին ենթագլուխը նվիրված է այն անհատներին, որոնք ուղղակի կամ անուղղակի ձևով (գրական գործունեության կամ նամակագրության միջոցով) եվրոպական միտքը ներկայացրել են իթթիհաթականներին [50] : Այդ անհատներից էին փիլիսոփա, դիվանագետ Արթուր դը Գոբինոն (1816-1882 թթ.), հրապարակախոս, բժիշկ Գուստավ Լը Բոնը (1841-1931 թթ.), թուրքագետ Արմինիուս Վամբերին (1832-1913 թթ.), գրող, արևելագետ Լեոն Կահենը (1841-1900 թթ.), ռազմական գործիչ Կոլմար ֆոն դեր Գոլցը (1843-1916 թթ.), մարքսիստ տնտեսագետ Մուստաֆա Փարվուսը (Ալեքսանդր Հելֆանդ, 1867-1924 թթ.): Վերոնշյալ հեղինակները իթթիհաթականների աշխարհայացքին ավելացրին նոր տարրեր, մասնավորապես՝ ռասիզմը և սոցիալ-դարվինիզմը: Երկրորդ ենթագլխում փորձ ենք կատարել ռատցելյան «կենսական տարածքի» (գերմ.՝ Lebensraum) տեսությունը տեղայնացնել իշխող «Միություն և առաջադիմություն» կոմիտեի թուրքական միատարր ազգային պետություն հիմնելու քաղաքականության վրա: Այս խնդիրն իրականացնելու համար ուսումնասիրվել է տարածքը «հայրենիք»-ի վերածվելու գաղափարական էվոլյուցիան թուրքական մտավորական վերնախավի ընկալումներում, այնուհետև այն հաստատելու խաղաղ՝ տնտեսական, մշակութային և բռնի մեթոդները: Վերջինս դրսևորվել է տեղաբնիկ ժողովրդի ոչնչացմամբ: Երրորդ ենթագլխում ներկայացվում է սպենսերյան սոցիալ-դարվինիզմի որդեգրման, դրա հիմնական սկզբունքների՝ «գոյության կռվի» և «ամենուժեղի/ամենահարմարվածի գոյատևման» (անգլ.՝ survival of the fittest) դրսևորումները կոմիտեի քաղաքականության և հատկապես Հայոց ցեղասպանության որոշման կայացման և դրա իրագործման վրա:

Ատենախոսության երրորդ՝ **««Միություն և առաջադիմություն» կոմիտեի ռասայական ազգայնականությունը և Հայոց ցեղասպանությունը»** գլխում բացառապես ուսումնասիրվում է եվրոպական ռասիզմի ազդեցությունը «Միություն և առաջադիմություն» կոմիտեն գաղափարախոսության վրա և դրա դրսևորումը Հայոց ցեղասպանության ընթացքում: Հայոց ցեղասպանության ռասայական դրդապատճառները քննել են մի շարք հետազոտողներ և որոշ ելակետային հարցեր հաշվի առնելով՝ ժխտել դրանք: Հիմնախնդրի կարևորությունը և շահարկումները հաշվի առնելով, կոմիտեի ռասայական ազգայնականության և Հայոց ցեղասպանության խաչաձևմանն անդրադառնում ենք առանձին գլխով: 1904 թ. ռասան (թուրք.՝ irk) իթթիհաթականների տեսական քննարկումներից և անձնական նամակագրությունից դուրս է գալիս հանրային քարոզչության դաշտ: Ներկայացվում են կոմիտեի գաղափարախոսներ Յուսուֆ Աքչուրայի և Մեհմեդ Զիյա Գյոքալփի ռասայի, մասնավորապես թուրքական ռասայի վերաբերյալ պատկերացումները, հատուկ

[50] Berkes N., The Development of Secularism in Turkey, London, “Hurst&Company”, 1998, p. 292.

մշակութային կազմակերպությունների և իթթիհաթական ակումբների միջոցով այդ գաղափարների տարածումը: Հաշվի առնելով այն, որ զոհ/թիրախավորված խմբի երեխաների, երիտասարդ կանանց ցեղասպանական ձուլումը ուսումնասիրման արժանի խնդիր է հատկապես ոճրագործ վերնախավի՝ ընդդեմ զոհի ռասայական նախապաշարմունքների և նրան ներքին թշնամի ընկալելու համատեքստում, այս թեմային անդրադարձել ենք առանձին ենթագլխով: Խնդիրը համապարփակ ներկայացնելու համար անդրադարձել ենք ձուլման նպատակով հայ երեխաների և կանանց բռնի տեղափոխման պետական հրամանների ընտրողական բնույթին, կրոնի դերակատարությանը և Եվրոպայում ժամանակին շրջանառվող ժառանգականության տեսություններին, որոնք դեր են խաղացել ձուլման գործընթացի կազմակերպման մեջ:

Եզրակացությունում ամփոփվել են ուսումնասիրության վերջնարդյունքները.

- Կոմիտեի գաղափարախոսության մեջ եվրոպական սոցիալ-փիլիսոփայական ու քաղաքական մտքի առանձին գաղափարների ներթափանցումը տեղի է ունեցել ինչպես անուղղակիորեն՝ գրականության, մամուլի, այնպես էլ ուղղակիորեն՝ եվրոպացի մտածողների և գործիչների հետ անձնական շփումների միջոցով:
- «Միություն և առաջադիմություն» կոմիտեի աշխարհընկալման մեջ թուրքական ազգայնականության զարգացման և առանձին անդամների աշխարհայացքի ձևավորման վրա հստակ ազդեցություն են ունեցել պոզիտիվիզմը, մատերիալիզմը, էլիտիզմը, հասարակական գիտության տարբեր ուղղություններ:
- Ռասիզմը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսության վրա ազդեցություն թողած գաղափարական հոսանքներից է: «Միություն և առաջադիմություն» կոմիտեի, այնուհետև քեմալականների ռասիստական դիսկուրսի հիմնական տարրերը, ինչպես, օրինակ՝ թուրքական ռասայի մաքրությունն ու գերազանցությունը, թուրքական աշխարհի աշխարհագրական տարածականությունը, թուրքերենի հնությունը, թուրքական մշակույթի միատարրությունը, համաշխարհային քաղաքակրթության մեջ թուրքերի ներդրումը հենված են եվրոպական թյուրքագետների ուսումնասիրությունների վրա:
- Թուրքիզմը կայսրության հայ համայնքի համար դարձել է մահացու, երբ մտքի երկու հստակ ուղղություններ միաձուլվել են՝ մի կողմից՝ թյուրքական ռասայի առասպելականացումն ու Թուրանի վեհացումը՝ որպես դրա ծագման վայր, և մյուս կողմից՝ քաղաքակրթության ռասայական հիմքերի վերաբերյալ եվրոպական կեղծգիտական շահարկումները:
- «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսության վրա ազդած գաղափարական մյուս ուղղությունը սպենսերյան սոցիալ-դարվինիզմն էր: Աշխարհընկալման սոցիալ-դարվինիստական մոդելը երիտթուրքերի մոտ խորացել է 1908 թ. հեղաշրջումից հետո՝ պատերազմներով և Օսմանյան կայսրության տարածքային կորուստներով պայմանավորված: Քաղաքական վերնախավը Առաջին համաշխարհային պատերազմը սկսել է ընկալել որպես թուրքերի «գոյության կռիվ»՝ միաժամանակ սնուցելով վախը «ազգի (ներքին) թշնամու» և «դավաճանի» նկատմամբ, արտահայտություններ, որոնցով պիտակավորել է հայ քաղաքացիներին:
- Սոցիալ-դարվինիզմը և՛ արդարացնում էր դարաշրջանին հատուկ ռասիզմը, և՛ դրանից սնուցվում՝ հիմնավորելով գոյության կռվի ընթացքում «գերիշխող ռասայի» հաղթանակը «ստորադասի» նկատմամբ: Երկուսն էլ արդարացնում էին պայքարն

ընդդեմ արտաքին և ներքին թշնամիների, պատերազմը համարելով յուրաքանչյուր ազգի զարգացման անխուսափելի փուլ: Իթթիհաթական միլիտարիզմը ևս սրանով է բացատրվում:

- Սոցիալ-դարվինիզմը, ռասայական տեսությունները ծանոթ էին Օսմանյան կայսրության բոլոր համայնքներին, սակայն լիովին արտահայտվել են իթթիհաթական մտավորական և քաղաքական վերնախավի աշխարհայացքում՝ նրանց էլիտիստական գաղափարների հետ սինթեզվելու միջոցով: Գաղափարական առումով ռասայական մտայնության որդեգրման բարենպաստ պայման էր նաև դարեր ի վեր թուրքերի՝ կայսրության «գերիշխող համայնք» (թուրք.՝ millet-i hakime) դիտվելու հանգամանքը:
- Իսլամը հատուկ դեր և նշանակություն է ունեցել «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գործունեության ողջ ընթացքում: Թեև գիտական մատերիալիզմի, պոզիտիվիզմի ազդեցությամբ հատկապես բարձրաստիճան պետական գործիչները աթեիստ էին դարձել, գործունեության բոլոր փուլերում նրանք փորձել են հաշտեցնել կրոնը արդիականացման գաղափարների հետ: Իսլամը եղել է նաև քարոզչական գործիք: Հայոց ցեղասպանության ընթացքում կրոնական հռետորաբանությունն օգտագործվել է մուսուլմաններին ընդդեմ հայերի հրահրելու համար: Կոմիտեի ներսում իսլամը սակայն երկրորդել է ռասիզմին՝ դրսևորվելով կրոնափոխության համընդհանուր արգելքով և մուսուլման հայերի կոտորածով:
- 1908 թ. իթթիհաթական քաղաքական վերնախավը, իր գաղափարներին համապատասխան, ձեռնարկել է միատարր թուրքական ազգային պետություն ստեղծելու քաղաքականությունը: Ընդունելով, որ պետության գոյատևման և զարգացման առաջնային նախապայմանը տարածքն է՝ դրա մակերևույթին միատարր բնակչության համաչափ տեղաբաշխմամբ՝ իթթիհաթականներն ընտրել են Փոքր Ասիա թերակղզին որպես թուրք ժողովրդի կենսական տարածք (Lebensraum) և հետագա հնարավոր ընդարձակման պլացդարմ: Կենսական տարածքի ընտրությունից հետո կառավարությունը որդեգրել է այն հաստատելու բռնի մեթոդները (ներքին և արտաքին պատերազմ, տարածքի ֆիզիկական զտում «հակառակորդ» ընկալվողներից), ինչն օսմանյան հայ համայնքի համար դարձել է ճակատագրական:
- 1913 թ. հեղաշրջման միջոցով կոմիտեն հաստատել է միակուսակցական բռնատիրություն և ընդունել արևմտաեվրոպական ազգայնականության մեկ ազգ – մեկ պետություն մոդելը: Թեև կոմիտեի ներսում դեռևս գաղափարական որոշակի հակասություններ կային, հիմնական նպատակը նույնն էր՝ թուրքական ազգային պետության հիմնում: Աճող իթթիհաթական ռասիզմի ազդեցությամբ Կենտրոնական Ասիայի թյուրքական ժողովուրդներն սկսել են թուրքական աշխարհի մաս դիտարկվել, իսկ նույն հողի վրա բնակվող հայերը՝ թշնամի: Այս մտայնությունը գումարվելով «Միություն և առաջադիմություն» կոմիտեի արդիականացման, միատարր թուրքական ազգային պետություն հիմնելու տեսլականի հետ՝ իթթիհաթականների համար ծառայել է ցեղասպանության համար բավարար պատճառ:
- Հայոց ցեղասպանության ընթացքում որպես ցեղասպանության իրականացման մեթոդ, կազմակերպվել է նաև հայ ընտրված երեխաների և երիտասարդ կանանց պետական ձուլման քաղաքականությունը: Դրա համար տեսական հիմնավորում ապահովել են ժամանակի ժառանգականության, հատկապես՝ Թեոդուլ-Արման Ռիբոյի, Ժան-Բատիստ Լամարկի, Ժան-Մարի Գույոյի տեսությունները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Gzoyan E., Galustyan R., Khachatryan Sh., Margaryan N., In the Beautiful Heaven, a Golden Cage: Race, Identity and Memory in Turkification of Armenian Children in State Orphanages During the Armenian Genocide, "Journal of Genocide Research", 2024, No. 26 (3), pp. 243–263.
2. Galustyan R., A Step Towards Identity Construction or Genocide? Ideological Transformations and Propaganda in the Ottoman Empire in 1911-1913, "International Journal of Armenian Genocide Studies", 2023, No. 8 (1), pp. 51-72.
3. Galustyan R., The Roots of the Racial Nationalism of the Committee of Union and Progress: Ideas, Individuals, Influences, "International Journal of Armenian Genocide Studies", 2022, No. 7 (1), pp. 6-25.
4. Գալուստյան Ռ., Հայ երեխաների բռնի տեղափոխումը Հայոց ցեղասպանության ընթացքում. ընտրություն, ոչնչացում, ձուլում, «Հայագիտության հարցեր», 2022, No. 25 (1), էջ 95-108:
5. Գալուստյան Ռ., «Կենսական տարածքի» ընկալումները Միություն և առաջադիմություն կոմիտեի աշխարհայացքում և Հայոց ցեղասպանությունը, «Ցեղասպանագիտական հանդես», 2021, No. 9 (1), էջ 9-36:
6. Gzoyan E., Galustyan R., Forced Marriages as a Tool of Genocide: The Armenian Case, "The International Journal of Human Rights", 2021, No. 25 (10), pp. 1724-1743.
7. Գալուստյան Ռ., Սոցիալ-դարվինիզմը երիտթուրքերի աշխարհայացքում և դրա դրսևորումները, «ՎԷմ համահայկական հանդես», 2020, No. 4 (72), էջ 253-273:
8. Գալուստյան Ռ., «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսության զարգացումը (1889-1908), «Ցեղասպանագիտական հանդես», 2019, No. 7 (2), էջ 9-32:
9. Գալուստյան Ռ., Դեպի թուրքական ազգային ինքնության կառուցում. թյուրքական անցյալի ուսումնասիրությունը և քարոզը 1911-1913 թթ., «Արևելագիտության հարցեր», 2017, No 13, էջ 234-255:
10. Գալուստյան Ռ., Թուրքական ազգայնականության ակունքներում. նոր օսմաններ, «Ցեղասպանագիտական հանդես», 2016, No. 4 (2), էջ 84-99:

Галустян Регина Алексановна

РОЛЬ ЕВРОПЕЙСКОЙ МЫСЛИ В ФОРМИРОВАНИИ ИДЕОЛОГИИ КОМИТЕТА "ЕДИНЕНИЕ И ПРОГРЕСС" И ЕЕ ВЛИЯНИЕ НА ГЕНОЦИД АРМЯН

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 «Всемирная история».

Защита диссертации состоится 15-го ноября 2024 г. в 14:00 на заседании специализированного совета 006 "Всемирная история" КВОН РА, действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4.

РЕЗЮМЕ

Цель диссертации – всестороннее исследование и представление роли европейской мысли в формировании идеологии Комитета "Единение и прогресс", а также ее влияния на Геноцид армян. Комитет стал первой политической силой, интегрировавшей европейские идеи в свою идеологию. Под их воздействием он стремился к созданию турецкой нации и национального государства, а также к их модернизации. При реализации этой политики Комитет, под влиянием европейских экстремистских идей (таких как расизм, социальный дарвинизм и органическая аналогия общества и государства), начал воспринимать определенные коренные христианские и мусульманские меньшинства как препятствия для безопасности и прогресса государства. Это восприятие в конечном итоге привело к решению уничтожить их. Армянский геноцид стал кульминацией этой решимости.

Хронологически тема охватывает период с 1889 по 1918 годы, начиная с момента основания Комитета "Единение и прогресс" и заканчивая его де-юре прекращением полномочий.

Структура и идеология Комитета "Единение и прогресс", а также общая история Геноцида армян и его отдельные эпизоды были предметом исследования армянских, турецких и иностранных ученых. Однако до сих пор отсутствует комплексное исследование европейских элементов в идеологии Комитета, их влияния и применения в

контексте Геноцида армян. В данной диссертации вводятся в научный оборот некоторые теоретические анализы, основанные на современных исследованиях геноцида, включая выявление и проявление социал-дарвинизма и расизма в мировоззрении правящей партии в период Геноцида армян.

В ходе исследования было выявлено, что общее мировоззрение членов Комитета "Единение и прогресс" и развивающийся турецкий национализм находились под воздействием позитивизма, материализма, элитаризма и различных течений европейской общественно-политической мысли. Наиболее ярко проявлялись расизм, спенсеровский социал-дарвинизм и концепция "жизненного пространства" (Lebensraum) Ратцеля, влияние которых на Геноцид армян подробно рассмотрено в диссертации. Тюркизм, представляющий собой турецкий национализм, стал фатальным для армянской общины Османской империи и других нетюркских меньшинств, когда мифологизация тюркской расы и прославление Турана как места ее происхождения соединились с европейскими псевдонаучными спекуляциями о расовых основах цивилизации.

Основой для исследования послужили пресса, печатные и рукописные мемуары очевидцев и жертв геноцида, а также соответствующая научная литература. Важную роль играли мемуары младотурок, а также политические и литературные произведения партийных идеологов, что способствовало выявлению влияния отдельных европейских мыслителей на их мировоззрение. Исследованию темы также содействовали сборники документов и донесения иностранцев, находившихся на дипломатической службе в Османской империи.

Исследование проводилось с использованием исторического, сравнительного, ретроспективного (регрессивного, реконструктивного) и системного методов. Данное исследование может иметь практическое значение для историков и политологов. Углубляя аргументацию в пользу преднамеренности геноцида армян, работа способствует борьбе с его отрицанием в различных областях.

REGINA GALUSTYAN

THE ROLE OF EUROPEAN THOUGHT IN SHAPING THE IDEOLOGY OF THE COMMITTEE OF UNION AND PROGRESS AND ITS INFLUENCE ON THE ARMENIAN GENOCIDE

Dissertation for the degree of Candidate of Historical Sciences on the specialization of "World History" 07.00.02.

The defense of the dissertation will be held on November 15, 2024, at 14:00 at the session of the HESC Specialized Council 006 on "World History" at the Institute of Oriental Studies of the NAS RA. Address: 24/4 Marshal Baghramyan Ave., Yerevan, 0019.

SUMMARY

This dissertation aims to is to comprehensively examine and present the role of European thought in shaping the ideology of the Committee of Union and Progress (Turkish: İttihat ve Terakki, 1889–1918) and its influence on the Armenian Genocide. The Committee was the first political force in the Ottoman Empire to integrate European ideas into its ideology. Under this influence, the CUP pursued the creation of a Turkish nation and a Turkish national state, along with its modernization. In implementing this policy, the Committee, influenced by European extremist ideas (such as racism, Social Darwinism, and the organic analogy of society and the state), began to view certain indigenous Christian and Muslim minorities as obstacles to the security and progress of the state. This perception ultimately led to the decision to eliminate them. The Armenian Genocide represents the culmination of this determination.

Chronologically, the subject spans the period from 1889 to 1918, beginning with the founding of the Committee of Union and Progress and ending with the formal termination of its power.

The structure and ideology of the Committee of Union and Progress, as well as the general history of the Armenian Genocide and its specific episodes, have been studied by Armenian, Turkish, and foreign researchers. However, there is still no comprehensive study of the European elements in the Committee's ideology and their influence on, and application

to, the Armenian Genocide. This dissertation introduces new theoretical analyses based on modern genocide studies, such as the presence and manifestation of Social Darwinism and racism in the worldview of the ruling party during the Armenian Genocide.

The research revealed that the overall worldview of the members of the Committee of Union and Progress, along with the development of Turkish nationalism, was influenced by positivism, materialism, elitism, and various strains of European socio-political thought. Among these, racism, Spencerian Social Darwinism, and Ratzelian "vital space" (Lebensraum) were the most prominent currents whose impact on the Armenian Genocide is explored in the dissertation. Turkish nationalism, or Turkism, became catastrophic for the Armenian community of the Ottoman Empire and other non-Turkish minorities when the mythologizing of the Turkic race, the glorification of Turan as its place of origin, and European pseudoscientific theories about the racial foundations of civilization converged.

The study is based on press sources, printed and handwritten memoirs of eyewitnesses and genocide survivors, as well as relevant academic literature. The memoirs of the Young Turks and the political and literary works of party ideologues were crucial in highlighting their alignment with various European thinkers. The research was further supported by collections of documents and reports from foreign diplomats stationed in the Ottoman Empire.

The research was conducted using historical, comparative, retrospective (regressive, reconstructive), and systematic methods. This study may have practical implications for both historians and political scientists. By strengthening the argument for the premeditation of the Armenian Genocide, the work can contribute to combating genocide denialism across various fields. Additionally, by analyzing the ideology of the genocide perpetrators and identifying early warning signs of alienation, racialization, and targeting, this research can also aid in the prevention of future genocides.